ԾԱԾԿԻ ՔԱՐԵ ՍԱԼ ԴՎԻՆԻՑ

Գ. Դ. ՔՈՉԱՐՅԱՆ

Անտիկ դարաշրջանում շենքերը ծածկել են կղմինդրներով, ինչպես նաև քարե ծածկի սալերով, որոնց նույնպես կղմինդրի տեսք են տվել։ Շինարարական այս տեխնիկան լայն տարածում է ունեցել ինչպես Հունաստանում, Հռոմում, մերձսևծովյան քաղաքներում և բնակավայրերում, այնպես էլ անտիկ աշխարհի այլ երկրներում։ Հայաստանում կղմինդրների օգտագործումը հայտնի է մի շարք հնավայրերից, իսկ ծածկի քարե սալեր օգտագործվել են Գառնիի հեթանոսական տաճարի վրա։ Ծածկի բաղալտե սալ հայտնաբերվել է նաև Դվինում 1965 թ.՝ Կաթողիկե եկեղեցու շրջակայքում՝ երկրորդ տեղամասի Դ—19 քառակուսուց (նկ. 1.)։ Սալի պահպանված մասից կարելի է ենթադրել, որ այն եղել է ուղղանկյուն, երկու կողմերի երկայնքով ձգվել են կողերը (որոնցից միայն մեկն է մասամբ պահպանվել), իսկ լայնությամբ՝ եզրերին զուգահեռ ելունը (սալի ընդհանուր բարձրությունը՝ 7 սմ է, կողինը՝ 2,5 սմ, իսկ ելունինը՝ 1,5 սմ)։ Դվինի սալի մասին ամբողջական պատկերացում կազմելուն օգնում են նաև Գառնիի հեթանոսական տաճարի շրջակայքից հայտնաբերված, լավ պահպանված, նույնաձև բաղալտե ծածկի սալերը (նկ. 2.)։ Սրանք նույնպես ունեն ուղղանկյուն տեսք, երկու կողմից ձգվող կողեր և Դվինի սալի նման կարճ եզրերին զուգահեռ ելուն (բարձրությունը՝ 1 սմ)։ Տաճարի տարածքից հայտնաբերված քառանիստ ծածկիչների (κεραμίς) վերին նիստերը կազմում են երկթեք կտուր, իսկ երկու կողային նիստերը զուգահեռ են միմյանց։

Դվինի սալը աղերսվում է նաև 1969 թ. Արտաշատի ղետնի մակերեսից (Խորվիրապից դեպի արևելք) հավաքած տափակ կղմինդրների բեկորների հետ, որոնց կողերի միջև ընկած է նեղ ելուն (նկ. 3.)։ Արտաշատի այս հավաքածոյում կան եռանիստ, վերին հարթ նիստը կողային նիստերի միացման անկյուններում թեք կտրվածքներով կավե ծածկիչներ։ Հետևաբար, պետք է ենթադրել, որ ծածկի տափակ քարե սալերը և նման կղմինդրները շարվել են իրար կողք, շաղախի վրա (նկատելի են շաղախի հետքեր), իսկ ձևավոր ծածկիչները հագցվել են սրանց միացման հանգույցներին։ Ելունավոր կղմինդրները և քարե սալերը նմանվում են Աղվանքից (Կապաղակից) հայտնաբերված մ. թ. ա. II—I դդ. թվագրվող նույնաձև կղմինդրներին, այն տարբերությամբ, որ սրանց հակառակ կողմը ծալված է ներքև[1]։

Հայաստանում հայտնաբերված այս կարևոր շինարարական նյութը զուգահեռներ ունի նաև մերձսևծովյան, հատկապես Բոսֆորյան թագավորության քաղաքներում և բնակավայրերում, որտեղ հելլենիստական ժամանակաշրջա-

---

[1] Й. А. Бабаев, Античная черепица Кавказской Албании («Советская археология», 1974, № 2, էջ 50—51)։



Նկ. 1



Նկ. 2

նում լայնորեն տարածված էր կղմինդրի «բոսֆորյան» ձևը[2]։ Այս ձևի տափակ կղմինդրները նույնպես ելունավոր են, սակայն, ի տարբերություն վերը նկարագրվածների, հակառակ կողմում ունեն 2 սմ հաստությամբ դեպի ներքև ուղղված, երկու ծայրերում մեկական կտրվածքնե.ով ծալվածք, որի շնորհիվ

[2] В. Ф. Гайдукевич. Строительные керамические материалы Боспора. Боспорские черепицы («Известия Государственной академии истории материальной культуры», вып. 104. М.—Л., 1935. էջ 222—227); Н. Я. Мерперт. Фанагорийские черепицы из раскопок 1938 года («Материалы и исследования по археологии СССР, № 19. М.—Л., 1951. էջ 227—235); В. Д. Блаватский. Античная археология Северного Причерноморья. М., 1961. էջ 50—53. Керамическое производство и античные керамические строительные материалы («Археология СССР. свод археологических источников, вып. Г1-20. М., 1966. աղ. 36. 40. 41):

կղմինդրների ամրացման համար այլ միջոց չէր օգտագործվում և ստացվում էր միաձույլ աստիճանաձև ծածկ։

Բոսֆորյան ծածկիչները նույնպես բազմանիստ են, վերին նիստերը կազմում են երկթեք կտուր կամ ներծկված են, երկու կողայինները՝ մի փոքր ներս հակված, կամ ուղղահայաց։ Գագաթից 7 սմ հեռավորության վրա ունեն աստիճանաձև ելուստ, հակառակ կողմում՝ ներքև իջնող վահանիկ, որով մի ծածկիչը հենվում էր հաջորդի աստիճանաձև ելուստին և չէր սահում ներքև։



Նկ. 3

Այսպիսով, Դվինի, Գառնիի, Արտաշատի ծածկի քարե և կավե սալերը որոշակի նմանություններ ունեն Աղվանքի և «բոսֆորյան» կղմինդրների հետ։ Ընդհանրությունները թույլ են տալիս Արտաշատի վերոհիշյալ կղմինդրները թվագրել հելլենիստական ժամանակաշրջանով, ավելի ստույգ՝ մ. թ. ա. II—I դդ.։ Գառնիի տաճարի սալերը թվագրվում են մ. թ. I դ.։ Թեև ելունավոր սալերը բնորոշ են հատկապես հելլենիստական ժամանակաշրջանին, սակայն վերոհիշյալ նմուշները ցույց են տալիս, որ բացառված չէ դրանց գոյությունը նաև մ. թ. I դ.։ Այս առումով ուշագրավն այն է, որ Աղվանքում (Կապաղակ) նույնպես ելունավոր կղմինդրները հասնում են մինչև մ. թ. I դ.[3]։ Ասվածից ելնելով Դվինի քարե ծածկի սալը կարելի է թվագրել հելլենիստական ժամանակաշրջանով, ամենաուշը մ. թ. I դ.։

[3] И. А. Бабаев. նշվ. աշխ., էջ 54, նկ. 5։

Կղմինդրների օգտագործումը կապված էր ծավալուն շինարարության հետ, իսկ վերջինս երկրի տնտեսական բարգավաճման արգասիք էր։ Հայաստանը տնտեսական բարգավաճում և ծավալուն քաղաքաշինություն է ունեցել հելլենիստական ժամանակաշրջանում՝ մ. թ. ա. III—I դդ.։ Դվինում հայտնաբերված հելլենիստական շերտի առկայությունը ցույց է տալիս, որ շինարարական աշխատանքներ ինչ-որ չափով ձեռնարկվել են նաև այստեղ, սակայն դրանց ծավալի և բնույթի հարցերը կարող են պարզել հետագա պեղումները։

КАМЕННЫЙ СОЛЕН ИЗ ДВИНА

Г. Г. КОЧАРЯН

Резюме

В 1965 г. при раскопке квадрата Д-19 был обнаружен фрагмент каменного солена (базальтовая плоская плита для перекрытия крыши). Судя по сохранившейся части, можно предположить, что он имел прямоугольную форму с двумя продольными бортиками и поперечным валиком (или выступом). Аналогичные каменные плиты использовались для перекрытия языческого храма Гарни (I в. н. э.). Здесь наряду с соленами употреблялись и многогранные калиптеры.

Двинский солен по своей форме напоминает также плоские черепицы эллинистического времени (II—I вв. до н. э.) из Арташата.

Черепица Армении по своей форме перекликается с черепицей античных городов и поселений Кавказской Албании (Кабалла) и Северного Причерноморья (Пантикапей, Фанагория, Ольвия).

Сопоставление двинского каменного солена с черепицей из вышеупомянутых памятников позволяет отнести его к эллинистическому периоду, точнее — I в. н. э.